



Ղազարոս Աղայեան

ՆՈՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ—ՄԻ ՀՆՁԻՒՆԻՆ ՄԻ ԳՐՈՒԹԻՒՆ

Հայկական գրերի գիւտի 1500 ամեակը և հայ գրքի տպագրութեան 400 ամեակը տօնելիս, ի միջի այլոց, մի շափազանց կարևոր հարց պիտի բարձրացնել և այս կամ այն վերջնական վճիռը տալ—այդ հայ լեզուի ուղղագրութեան հարցն է:

Մեր գրերի գիւտի պատմութիւնից յայտնի է, առաջին՝ որ գրերը շատ մեծ ջանքերով ու տարիների աշխատանքով յարմարեցրին հայ հնչմանը. երկրորդ գրում էին ժողովրդին հասկանալի լեզուով. Սակայն 1500 տարիներ անցնելուց յետոյ, մեր լեզուն հետըհետէ այնքան մեծ փոփոխութիւնների ենթարկւեց որ ժողովուրդը այլևս նրան չէր հասկանում: Քանի որ գրականութիւնը պարփակւած էր մնում միայն վանքերի պարիսպների մէջ, սահմանափակ մարզկանց շքրջանում և գրականութեան նիւթն էլ կրօնաբարոյական ու պատմական առարկաներն էին միայն, այդ հանգամանքը աննկատ էր անցնում, բայց երբ հարկաւոր եղաւ գրագիտութիւնը տարածել ժողովրդական լայն խաւերի մէջ, հասկանալի լեզուի գործածութիւնը արդէն անյետաձգելի մի պահանջ դարձաւ ու անհասկանալի, դժւար գրարար լեզուն փոխարինեց բոլորովին մատչելի աշխարհարարը:

Այս 1500 տարւայ ընթացքում փոփոխութեան ենթարկւեց ոչ միայն լեզուն, այլ և նրա ուղղագրութիւնը. առաջ որ գրութիւնը համապատասխանում էր հնչմանը՝ այժմ շատ և շատ դէպքերում այդպէս չէ: Այժմ մի հնչիւնը փոխանակ մի գրութեամբ գրելու, գրում են երկու, երբեմն երեք և աւել գրութեամբ:

Այսպէս՝ ուսուց Ե-ի գիմաց մինք ունենք վ, ւ, ու: Օ-ի գիմաց՝ օ, ու. երուպական ի-ի գիմաց՝ հ, յ և այլն, որոնք շափազանց դժւարացնում են ուսուցման գործը:

Ուղղագրութեան գործը առանձին ժամանակ չըպիտի խլէր մանկավարժից, այլ բոլորովին զուգընթաց պիտի գնար ընթերցանութեան ուսուցման հետ. այնինչ այժմ երբ մեր աշակերտները ուսուցման արդէն

առաջին տարում կարողանում են ուղիղ կարգալ, ուղիղ գրելը յաջողւում է նրանց մի քանի տարիների ծանր աշխատանքներից յետոյ:

Հին ուղղագրութիւնը իւրացնելու համար մեր աշակերտութիւնը անհամար ժամեր է նւիրում. բոլորովին ապարդիւն աշխատանք, որ կարելի էր աւելի օգտակար կերպով գործադրել:

Նոր ուղղագրութեան անհրաժեշտ կարիքը շատերն են զգում, բայց չգիտեմ ի՞նչու, բոլորովին անիրագործելի մի բան են համարում այդ:

Իրաւ է, որ նոր ուղղագրութիւնը չի յաջողւել Ֆրանսիացիներին, անգլիացիներին, բայց յաջողւել է գերմանացիներին և կատարելապէս յաջողւել է մեր դրացի վրացիներին:

Վրացիք վերացրին իրենց ուղղագրական դժւարութիւնները այն աստիճան, որ այժմ մանուկները հէնց պատրաստական դասարաններում անսխալ են գրում:

Նոր ուղղագրութիւն յօրինելը ծանր չէ բայց նրան տարածելը և ընդունել տալը շափազանց դժւար է և յամենայն դէպս առանձին մի անհատի գործ չէ, այլ մի հեղինակաւոր հիմնարկութեան:

Նոր ուղղագրութիւն կազմելիս, պէտք է աչքի առաջ ունենալ երկու հաւասարաչափ կարևորութիւն՝ շնչոց հանգամանք—աչքի առաջ պիտի ունենալ, նախ՝ արդէն գրել կարողալ իմացողների և ապա աշակերտութեան շահերը:

Առաջինների շահերը պաշտպանւած պիտի համարել, եթէ մենք նոր տառեր, նոր գրութեան ձևեր չհնարենք, այլ եղածների մէջ միայն ընտրութիւն անենք. իսկ վերջինների շահերը այն ժամանակ, երբ նրանց ձեռքը կտանք մի հեշտ ուղղագրութիւն, որոնք փոխանակ 5-6 տարի չարչարելով ուղղագրական արհեստը ձեռք բերելու, բոլորովին աննկատելի կերպով ձեռք կբերէին նրան զուգընթաց ընթերցանութեան հետ:

Հայ նոր ուղղագրութիւն կազմողը պիտի լինի մի հեղինակաւոր մարմին, մի համագումար, բաղկացած մանկավարժներից, լեզուագէտներից, գրականագէտներից, մասնակցութեամբ էջմիածնի ներկայացուցչի, որ ընդունելի լինի ամենքի կողմից, ընդունւի պաշտօնապէս և դասաւանդւի դպրոցներում:

Մինչ այդ մասնաւոր անհատներ կկարողանային ապագայի համար միայն նիւթեր առաջարկել:

ԹՈՄԱՍ

